ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 165-Ա
15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021Թ
ԱՐՄԵՆ ԴԱՎԹՅԱՆԻՆ, ԱՐՄԻՆԵ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՆՆԱ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշման 3-րդ և 7-րդ կետերով և հիմք ընդունելով տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ ԳՍ/17.3/26030-2021 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վայոց ձորի մարզպետի խորհրդական Արմեն Դավթյանին, մարզպետի օգնական Արմինե Ասատրյանին, մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող Աննա Սիմոնյանին 2021 թվականի հոկտեմբերի 18-19-ը գործուղել ք.Երևան «Նոր իրողությունների պարագայում ռուս–հայկական համագործակցության հեռանկարներ» խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային ութերորդ համաժողովին մասնակցելու նպատակով:
2. Գլխավոր հաշվապահին՝ Արմեն Դավթյանի, Արմինե Ասատրյանի, Աննա Սիմոնյանի գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ, գիշերավարձ և ճանապարհածախս) կատարել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով Վայոց ձորի մարզպետարանի ներքին գործուղումների

համար նախատեսված միջոցների հաշվին՝ օրենսդրությամբ սահմանված չափով և կարգով:

3. Արմեն Դավթյանին, Արմինե Ասատրյանին, Աննա Սիմոնյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն՝ գործուղման հետ կապված ծախսերի և գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

10/15/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ